ՆԱԽԱԳԻԾ

Պ-436[11]-23.06.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն օրենքի հավելվածի 6.1-ին կետում «պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրության, առևտրի» բառերը փոխարինել «պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների), պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի, պահեստավորման, տեղափոխման կամ կիրառման (շահագործման), հրագործական արտադրատեսակների արտադրության, ներմուծման (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների), հրագործական արտադրատեսակների կիրառման (շահագործման), առևտրի (իրացման), պահեստավորման և տեղափոխման (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն կենցաղային նշանակության 1-ին և 2-րդ դասերի արտադրատեսակների պահեստավորմանը և տեղափոխմանը)» բառերով, իսկ «լիցենզիաների տրամադրման,» բառերից հետո լրացնել «պետական և համայնքային նշանակության կամ պետական և համայնքային մասնակցությամբ միջոցառումների համար հրագործական արտադրատեսակների ներմուծման և կիրառման թույլտվության տրամադրման,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ««ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՕՐԵՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-436-22.11.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները խմբագրել հետյալ դասակարգմամբ՝ Պայթուցիկ նյութերի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ՝ 1) Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն, ներմուծում կամ արտահանում,	Ընդունվել է	Ընդունվել է

			2) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր, պահեստավորում կամ տեղափոխում, 3) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների կիրառում կամ պայթեցման աշխատանքների կատարում՝ առանց գործունեության վայրի պահանջ սահմանելու:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Հրագործական արտադրատեսակների լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ՝ 1) Հրագործական արտադրատեսակների արտադրություն, ներմուծում կամ արտահանում, 2) Հրագործական արտադրատեսակների առևտուր (իրացում), պահեստավորում կամ տեղափոխում (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների 1-ին և 2-րդ դասերի, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն պահեստավորմանը և տեղափոխմանը): 3) Հրագործական արտադրատեսակների կիրառում (շահագործում)՝ առանց գործունեության վայրի պահանջ սահմանելու,	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է «Լիցենզավորման մասին» օրենքի նախագծում պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների ներմուծմամբ զբաղվելու գործունեության համար համապատասխանաբար բացառություն	Ընդունվել է	Ընդունվել է

			սահմանել ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների, ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների առնչությամբ:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Առաջարկվում է ծանուցման ենթակա հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի գործունեության տեսակները սահմանել որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ՝ առաջարկում ենք նախագծում նախատեսել անցումային դրույթներ այն դեպքերի համար, երբ. 1) այդ գործունեության տեսակներով զբաղվելու նպատակով «Գործունեության իրա-կանացման ծանուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվել են ծանուցումներ մինչև նախագծերի ուժի մեջ մտնելը, 2) համապատասխան պետական տուրքերը կգանձվեն մինչև նախագծի ուժի մեջ մտնելը, իսկ ծառայությունների մատուցումը կիրականացվի դրանից հետո:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է 1-ին մասի «ա)» կետի «Հրագործական» բառն փոխարինել «հրագործական» բառով, «բաղադրության» բառը՝ «բաղադրիչների» բառով,	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է «կենցաղային» բառը փոխարինել «Կենցաղային» բառով՝ պաշտոնական ինկորպորացիայի ժամանակ խնդիրներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է «պարբերությունը» և «պարբերությունները» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «կետը» և «կետերը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է 2-րդ մասի «պահից» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրվանից» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Առաջարկվում է պետական տուրքի դրույքաչափերը սահմանել ըստ ներկայացված լիցենզավորման ենթակա գործունեության դասակարգման՝ կից ներկայացված աղյուսակներին համապատասխան:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է «բովանդակությամբ» բառն	Ընդունվել է	

			անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով:		Ընդունվել է
«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Առաջարկվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բացառությունների թվարկման մեջ նախատեսել նաև 9-րդ հոդվածի 12.1-ին մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է համապատասխանեցնել նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումներին մասնավորապես՝ 1) նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով նոր խբագրությամբ շարադրվող 9-րդ մասը այնպես ձևակերպել, որպեսզի վարչական պատասխանատվություն նախատեսվի պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրության, ներմուծման,արտահանման, առևտրի,	Ընդունվել է	Ընդունվել է

			պայթեցման աշխատանքների կատարման, պահեստավորման, տեղափոխման կամ կիրառման գործունեության տեսակների լիցենզավորման պահանջների և պայմանների խախտման համար: 2) Նոր խմբագրությամբ շարադրվող 10-րդ մասը այնպես ձևակերպել, որպեսզի վարչական պատասխանատվություն նախատեսվի հրագործական արտադրատեսակների արտադրության, ներմուծման, արտահանման, կիրառման, առևտրի պահեստավորման կամ տեղափոխման գործունեության տեսակների լիզենզավորման պահանջների կամ պայմանների խախտման համար: 3) Նոր խբագրությամբ շարադրվող 11-րդ մասը ձևակերպել այն տրամաբանությամբ, որ վարչական պատասխանատվություն նախատեսվի կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների ներմուծման կամ կիրառման թույլտվության պայմանների կամ պահանջների խախտման համար:		

2.	ՀՀ կառավարություն	նախագիծ	Առաջարկվում է՝ 1) լիցենզիայի պայմանների կամ պահանջների խախտման վերաբերյալ վարչական գործերի ենթակայությունը վերապահել **հրդեհային անվտանգության** ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ **Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին,** **2)** կենցաղային նշանակության հրագործական III դասի և տեխնիկական նշանակության հրագործական արտադրատեսակների ներմուծման և կիրառման թույլատվության պայմանների կամ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել **Ներքին գործերի նախարարությանը:** **3)** 16 տարին չլրացած անձանց կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակի վաճառքի նկատմամբ վերահսկողությունը վերապահել տեղական ինքնակառավարման մարմիններին:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	ՀՀ կառավարություն	Օրենքների նախագծեր	**Առաջարկվում է օրենքների նախագծերի փաթեթին ավելացնել՝ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ օրենքների նախագծերը:**	Ընդունվել է	Ընդունվել է